



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

13 նոյեմբերի 2020 թվականի թիվ 144-Ա

ք. Երևան

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 131-Ա ՈՐՈՇՄԱՍԲ «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԸ՝ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ՝ «ՀԱՅԵԼՈՒ ԱՌԱՋ» ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍՈՎ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի նոյեմբերի 13-ի նիստում քննարկեց Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 131-Ա որոշմամբ «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառված վարչական տույժը՝ լիցենզիայի գործողության կասեցումը՝ «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով վերացնելու մասին հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2020 թվականի սեպտեմբերի 30-ին լսողական մեդիաձառայություն մատուցող «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտումը:

Հեռարձակողի կողմից «Արմնյուզ ՖՄ» լսողական ծրագրի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի եթերում Անժելա Թովմասյանի «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման (45 րոպե տևողությամբ) հեռարձակման ընթացքում հնչեցվել են հավաստիությունը չստուգված փաստեր և չհիմնավորված արտահայտություններով և այսպես կոչված գնահատականներով նպատակաուղղված թիրախավորել են Հայաստանի Հանրապետության վարչապետին և նրա ընտանիքը՝ փորձելով ստեղծել անվստահության և խուճապային մթնոլորտ երկրում և թշնամական վերաբերմունք վարչապետի անձի և գործողությունների նկատմամբ: Հնչել են նաև ակնհայտ կեղծ մեղադրանքներ ուղղված ՀՀ բժիշկներին, կասկածի տակ են դրվել բժշկական համակարգի կողմից տարված աշխատանքների և ոչ միայն բժշկական, այլև հետազոտական տվյալների հիման վրա հաղորդված ինֆորմացիայի հանդեպ՝ նսեմացնելով բուժաշխատողների աշխատանքը Covid-19-ի դեմ պայքարում:

Հանձնաժողովը վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում հաստատված է

համարել այն փաստը, որ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 55-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 58-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի դրույթներով՝ 2020 թվականի հոկտեմբերի 19-ին ընդունել է «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 131-Ա որոշումը՝ կասեցնելով «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության լիցենզիայի գործողությունը՝ «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով՝ 30 օր ժամկետով:

2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 131-Ա որոշումն ուժի մեջ է մտել այն Հեռարձակողին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից, իսկ լիցենզիայի գործողությունը կասեցված է համարվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 131-Ա որոշումն ուժի մեջ է մտել 2020 թվականի հոկտեմբերի 20-ից և լիցենզիայի գործողության կասեցումը՝ «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով կասեցված է համարվել 2020 թվականի հոկտեմբերի 20-ից:

Հեռարձակողը 2020 թվականի հոկտեմբերի 26-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ խնդրել է վերացնել Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 131-Ա որոշումը և հայտնել, որ «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության և Անժելա Թովմասյանի միջև աշխատանքային հարաբերությունները դադարել են և «Արմնյուզ ՖՄ» լսողական ծրագիրը այլևս չի ցուցադրելու Անժելա Թովմասյանի «Հայելու առաջ» հեղինակային հաղորդումը և վերը նշվածի համար որպես իրավական հիմք նշել է «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության և «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության միջև կնքված 01.02.2020 թվականի Հեղինակային իրավունքի օբյեկտների ստեղծման և համատեղ օգտագործման վերաբերյալ պայմանագիրը, իսկ ավելի ուշ Հանձնաժողովի կողմից Հեռարձակողին ուղղված գրությանն ի պատասխան 2020 թվականի նոյեմբերի 02-ին ներկայացրել է նաև վերոնշյալ պայմանագրի պատճեն: Հեռարձակողը հայտնել է նաև, որ «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման ցուցադրման հիմքը այդ պայմանագիրն է հանդիսանում, իսկ քանի որ 2020 թվականի հոկտեմբերի 09-ին լուծվել է «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության և Անժելա Թովմասյանի միջև 2019 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված մտավոր գործունեության արդյունքների ստեղծման և դրանց նկատմամբ օգտագործման իրավունքների տրամադրման պայմանագիրը, ապա այդ նույն պահին դադարել է Հեռարձակողի կողմից «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման ցուցադրման հիմքը:

Այսպիսով, սույն գործի համար էական նշանակություն ունեցող փաստերի ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 131-Ա որոշմամբ Հեռարձակողի նկատմամբ կիրառված վարչական տույժը՝ լիցենզիայի գործողության կասեցումը՝ «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով կասեցվել է 30 օր ժամկետով և կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվանը հաջորդող օրվանից՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ից:

Իսկ Հեռարձակողի կողմից ներկայացված տեղեկատվությունից պարզվում է, որ «Հայելու առաջ» հեղինակային հաղորդման ցուցադրման հիմքը «ԱՐՄՆՅՈՒԶ» ՓԲ ընկերության և «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության միջև 01.02.2020 թվականին կնքված Հեղինակային իրավունքի օբյեկտների ստեղծման և համատեղ օգտագործման վերաբերյալ պայմանագիրն է, որը դադարել է:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հեղինակագրման կամ լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո

կարգավորող պետական մարմնի նշած ժամկետում սույն հոդվածի 1-ին մասում նշված խախտումները վերացնելու դեպքում կարգավորող պետական մարմինը վերացնում է կասեցումը:

Կասեցման ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը:

«Լիցենզավորման մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Լիցենզիայի գործողության կասեցումը որոշակի ժամկետով կամ որոշակի պայմաններով լիցենզավորված անձին լիցենզավորման ենթակա գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթները կամ լիցենզիայով վերապահված առանձին գործողություններն իրականացնելու իրավունքից ժամանակավորապես զրկումն է:

Վերը նշված փաստական և իրավական հիմնավորումներից ակնհայտ է, որ Հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 131-Ա որոշմամբ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետը չի սահմանվել մինչև խախտման պատճառի վերացումը, այլ «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառված լիցենզիայի գործողության կասեցումը՝ «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով սահմանվել է 30 օր ժամկետով: Հետևաբար, «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով կասեցումը վերացված է համարվում կասեցման ժամկետը լրանալու օրվանը հաջորդող օրվանից՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***.

1. Վերացնել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 131-Ա որոշմամբ «ՌԱԴԻՈ 107 ՖՄ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառված վարչական տույժը՝ լիցենզիայի գործողության կասեցումը՝ «Հայելու առաջ» տեսալսողական հաղորդման մասով՝ 2020 թվականի նոյեմբերի 19-ից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի նոյեմբերի 19-ից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆԶՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

13 նոյեմբերի 2020թ.

ք. Երևան